

Ա. Գ. Բոյաջյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐՆ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ**

Բանալի բառեր՝ ժողովրդագրություն, բնական վերարտադրություն, միգրացիա, ծնելիություն, մահացություն, բնական աճ, գաղթական, ժողովրդագրական անցման փուլեր, հասարակական կյանք, կապիտալիզմ, սոցիալիզմ:

Ключевые слова: демография, естественное воспроизводство, миграция, рождаемость, смертность, естественный прирост, мигрант, демографический переходный этап, социальная жизнь, капитализм, социализм.

Keywords: demography, natural reproduction, migration, birth rate, death rate, natural growth, demography transitive period, social life, capitalism, socialism.

Հասարակական կյանքի անցումային շրջաններն ազդում են բնակչության թվի փոփոխության վրա: Հատկանշական է, որ մեր հանրապետությունում ժողովրդագրական անցման փուլերը ժամանակագրորեն համընկնել են հասարակական կյանքի անցումային շրջաններին: Անցման շրջափուլերը սահմանազձեղիս առաջնորդվել ենք պատմական շրջադարձային այն իրադարձություններով, որոնք որոշակիորեն ներազդել են մեր հանրապետության բնակչության ժողովրդագրական շարժընթացների վրա: Այդ առումով, XXդ. Հայաստանում կարելի է առանձնացնել անցումային երեք շրջան: Անցումային առաջին շրջանը ներառում է 1914-1920թթ.(Առաջին աշխարհամարտից մինչև խորհրդային կարգերի հաստատում), երկրորդը՝ 1921-1937թթ.(ՆՏՔ-ի՝ նոր տնտեսական քաղաքականության, արդյունաբերականացման և կոլեկտիվացման տարիներ, անցում կապիտալիզմից սոցիալիզմի) և երրորդը՝ 1988-2003թթ.(Արցախյան գոյամարտ, անկախացում, սեփականաշնորհման գործընթաց, անցում սոցիալիզմից ազատ շուկայական հարաբերությունների):

Ընդհանուր առմամբ բնակչության զարգացման օրինաչափությունները պայմանավորված են կենսաբանական, ժողովրդագրական, սոցիալ-տնտեսա-

կան, հոգևոր, մշակութային և հոգեբանական գործոններով: Պատմականորեն բնակչության թվի փոփոխության վրա որոշակի ազդեցություն են գործում հասարակական կյանքի անցումային շրջանները: Հայաստանի ներկայիս տարածքում XX դ. ընթացքում ճակատագրական երեք շրջադարձային իրադարձություններ տեղի ունեցան, որոնք էապես փոխեցին հանրապետության բնակչության ժողովրդագրական իրապայմանները: Հատկանշական է, որ հանրապետությունում ժողովրդագրական անցման փուլերը ժամանակագրորեն համընկել են հասարակական կյանքի անցումային շրջաններին[10]:

Առաջին անցումային շրջանն ընդգրկում է 1914-1920 թթ., որոնք հայ ժողովրդի կյանքի մղձավանջային տարիներն էին: Թուրքական կառավարությունը ծրագրավորված և համակարգված ոչնչացրեց ավելի քան 1,5 մլն հայ [3]: Դրա վկայությունն է Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթի հեռագրերից մեկը. «Ձեռնարկվող միջոցներն ինչքան էլ դաժան լինեն, պետք է վերջ տալ հայերի գոյությանը: Ոչ մի ուշադրություն չդարձնեք ո՛չ տարիքին, ո՛չ սեռին, ո՛չ էլ խճի խայթին» [16]:

Երկրորդ անցումային շրջանը խորհրդայնացման առաջին 20 տարիներն էին, երբ տեղի ունեցավ անցում կապիտալիզմից սոցիալիզմի, այսինքն՝ 1920-1930-ական թվականները ներառել են ՆՏԲ-ի, արդյունաբերականացման ու կոլեկտիվացման տարիները, երբ արմատական փոփոխություններ տեղի ունեցան ոչ միայն տնտեսության, այլև բնակչության ժողովրդագրական իրապայմաններում:

Երրորդ անցումային շրջանը ներառում է 1988-2003 թթ., երբ նորանկախ Հայաստանում կատարվեց հասարակարգի փոփոխություն՝ անցում սոցիալիզմից կապիտալիզմի: Բացի դրանից, 1988 թ. Արցախյան շարժմամբ պայմանավորված և խորհրդային կառավարության ազգային սխալ քաղաքականությամբ թելադրված՝ հարյուրհազարավոր հայեր Ադրբեջանից գաղթեցին Հայաստան:

Առաջին աշխարհամարտի սկսվելուն պես Արևմտյան Հայաստանի բնակչության համար ճակատագրական եղան 1914-1916 թթ., իսկ Արևելյան Հայաստանի՝ 1918-1920 թթ.: Այդ տարիներին Թուրքիայից, այդ թվում՝ Արևմտյան Հայաստանից դեպի Կովկաս և Արևելյան Հայաստան ինչքան է եղել գաղթականների թիվը, մինչ օրս ստույգ պարզված չէ: Պրոֆեսոր Հ. Թումանյանի կարծիքով, 1914-1920 թթ. Արևմտյան Հայաստանից դեպի Կովկաս են գաղթել 350 հազար հայեր, որոնց մեծ մասը տեղավորվել է Հայաստանում, իսկ Ջ. Կորկոտյանը նշում է, որ Հայաստան ապաստանած գաղթականների թիվը 1916 թ. կազմել է 200 հազար[8]: Մեկ այլ տեղ հիշատակվում է, որ նշված ժամանակահատ-

վածում Արևմտյան Հայաստանից Կովկաս գաղթել են 500-600 հազար մարդ, որոնցից 350 հազարը մեկնել է Հյուսիսային Կովկաս և Վրաստան, իսկ 200 հազարը տեղավորվել է Հայաստանում[20]: Պ. Աբելյանը հիշատակում է, որ Արևելյան Հայաստանում 1916թ. գաղթականների թիվը 116 հազար էր[2]: 1915թ. հունվարի 30-ի վիճակագրական հետազոտության ոչ լրիվ տվյալներով, Թուրքիայից ու Պարսկաստանից եկած գաղթականների թիվը 67 հազար էր, որոնցից 50 հազարը՝ հայեր[11]: Գաղթականներն այնքան շատ էին, որ Կովկասյան ռազմաճակատի հրամանատարությունը 1915թ. ստիպված եղավ ստեղծելու «Գաղթականների ընդունման և տեղավորման» գլխավոր լիազորություն: Այդ լիազորության տվյալներով, 1916թ. հունվարի 1-ի դրությամբ Կովկասում տեղավորված գաղթականների թիվը 182,8 հազար էր, որոնցից 105 հազարը տեղավորվել է Երևանի, իսկ մնացածը՝ Ելիզավետպոլի և Բաթումի նահանգներում, Կարսի և Կուբանի մարզերում [1]: Մինչև 1923թ. Հյուսիսային Կովկասում ապաստանած հայ գաղթականների զգալի մասը ցանկանում էր վերադառնալ Հայաստան: 1923թ.-ից իրավիճակը փոխվում է: Երկրամասում մի կողմից՝ տնտեսական վիճակի կայունացումը, հայ բնակչության զբաղվածության ապահովվածությունը, ռուսաց լեզվին տիրապետումը, իսկ մյուս կողմից՝ Հայաստանում սակավահողության պատճառով դեռևս հողաբաժին չստացած գաղթականների մեծ թվի առկայությունը նախադրյալներ ստեղծեցին, որ նրանք չվերադառնան Խորհրդային Հայաստան: Հայաստանից բնակչության արտագաղթը պայմանավորված է եղել նաև բնական աղետով: Արտագաղթին նպաստել է 1915թ. Ալեքսանդրապոլի երկրաշարժը: Որպես հետևանք՝ 15 հազար մարդ մեկնեց Հյուսիսային Կովկաս և այլ երկրներ: Հետագայում նրանց մեծ մասը վերադարձավ [11]: Հայաստանի բնակչության թիվը 1918թ. վերջին ամիսներին, ըստ ընթացիկ հաշվառման տվյալների, գաղթականների հետ միասին կազմել է 1306,7 հազ. մարդ [3]:

Հայաստանը, 1918-1920թթ. լինելով անկախ և պատերազմելով Թուրքիայի, Վրաստանի ու Ադրբեջանի դեմ, ունեցավ մարդկային մեծ կորուստներ: Անկախության երկու տարիներին հանրապետության բնակչության բացարձակ թիվը պակասեց շուրջ 600 հազարով կամ 40,5%-ով [12]: 1920թ. վերջին թուրքական զորքերը, Հայաստան ներխուժելով, հարյուրհազարավոր հայեր սպանեցին, նույնքանն էլ փախան Հյուսիսային Կովկաս: Մասնավորապես կոտորածները մեծ չափերի հասան Ալեքսանդրապոլի գավառում: Ա. Մռավյանը տվյալներ է վկայաբերում Ալեքսանդրապոլի գավառի գաղթականների գործով զբաղվող հանձնաժողովի աշխատանքի արդյունքներից: Ըստ դրանց՝ գա-

վառում թուրքերը կոտորել են 60 հազար մարդ, վիրավորների թիվը 38 հազար էր, գերիներինը՝ 18 հազար, իսկ քաղցից մահացածներինը 32 հազար է եղել [5]:

Հայաստանի խորհրդայնացումը (երկրորդ անցումային շրջան) բարենպաստ պայմաններ ստեղծեց ազգաբնակչության թվաքանակի ավելացման համար: Բավական է նշել, որ միայն 1922-1929թթ. արտասահմանից խորհրդային Հայաստան վերադարձավ 20,3 հազար հայ[11]: Հանրապետությունում բնակչության աճի միտումը պահպանվեց նաև 30-ական թվականներին: 1921-1988թթ. Հայաստանի բնակչության թիվը նվազել է. միայն Հայրենական մեծ պատերազմի տարիներին՝ շուրջ 75,7 հազարով [3]: Հետպատերազմյան տարին հարյուրհազարավոր հայեր աշխարհի տարբեր երկրներից եկան Հայաստան՝ մշտական բնակության: Արժե հիշատակել, որ 1949թ. Լենինականի ամբողջ բնակչության թվի 10%-ից ավելին եղել են սփյուռքահայեր [6]: Աղյուսակ 1-ից երևում է, որ 1920-1989թթ. բնակչության թվաքանակն ավելացել է 2584,8 հազարով կամ 4,6 անգամ:

Աղյուսակ 1

ՀՀ բնակչության թվաքանակի շարժընթացն անցումային շրջաններում (հազար մարդ)¹

	1913թ.	1918թ.	1920թ.	1926թ.	1939թ.	1989թ.	1992թ.	2001թ.
Բնակչության թիվը	1000,1	1306,7	720,0	881,3	1282,3	3448,6	3868,6	3213,0
այդ թվում՝ տղամարդ	520,0	627,3	367,2	448,7	648,6	1693,3	1693,3	1541,9
կին	480,1	679,4	352,8	431,8	633,7	1755,3	1755,3	1671,0
միջին տարեկան աճը (%)	1,4	6,1	-3,1	-0,6	3,2	3,2	3,7	2,5

Երրորդ անցումային շրջանը բնութագրվում է ավելի քան մեկ միլիոն բնակչության տեղաշարժամբ: Սպիտակի 1988թ. դեկտեմբերի երկրաշարժից խստորեն տուժած Հայաստանը (պաշտոնական տվյալներով երկրաշարժի հետևանքով զոհերի թիվը շուրջ 25 հազար է եղել[4], իսկ ոչ պաշտոնական՝ 55 հազար [22]), ստիպված եղավ դիմագրավել նաև ներգաղթի մի հզոր ալիքի, ազգամիջյան հակամարտության հետևանքով ընդամենը չորս տարվա ընթացքում Ադրբեջանից տեղահանվեցին ավելի քան կես միլիոն հայեր, որոնցից 360 հազարը հանգրվանեցին մեր հանրապետությունում: Հայաստանն 1988-

¹ Աղյուսակը կազմելիս օգտագործվել են. Լ Դավթյանի, Սովետական Հայաստանի բնակչության վերարտադրությունը, Եր., 1965թ.: Վ. Խոջաբեկյանի, Հայաստանի բնակչության վերարտադրությունը եւ տեղաշարժերը XIX-XX դարերում XXI դարի շեմին, Եր., 2001թ.: *В. Ходжабекийн, Б. Асатрян, Демографические аспекты урбанизации в Армянской ССР, Ер., 1990г., Население СССР 1987г, М. 1988г., նյութերը:*

1994թթ. ընդունել էր շուրջ 420 հազար փախստական[9]: Այսինքն՝ կարճ ժամանակահատվածում հանրապետության բնակչության թիվը ներգաղթի հաշվին ավելացավ 12,3%-ով, և 1994թ. հանրապետության բնակչության թիվը, ըստ ընթացիկ հաշվառման տվյալների, կազմեց շուրջ 3,8 մլն մարդ: Մակայն, ներգաղթին զուգընթաց, 1991թ. սկսած՝ հանրապետությունում ավելանում է արտագաղթողների թիվը՝ պայմանավորված քաղաքական, սոցիալ-տնտեսական, բարոյահոգեբանական և պատերազմական գործոններով: Եթե 1993-1999թթ. արտագաղթը հիմնականում աշխատանքային արտագնացությունն էր, ապա 1999թ. հետո այն վերափոխվում է որոշ առումով մշտական արտագաղթի:

Հայաստանում 2001թ. անցկացված առաջին մարդահամարի տվյալներով, մշտական բնակչության թիվը եղել է 3,2 մլն[13]: Ըստ մեր փորձագիտական գնահատականի՝ 1993-2011թթ. հանրապետության բնակչության իրական թվաքանակը նվազել է շուրջ 1,4 մլն մարդով: Հայաստանում 2011թ. մարդահամարի նախնական արդյունքներով, առկա բնակչության թիվը կազմել է 2875,4 հազար մարդ, իսկ 2001թ. մարդահամարի՝ 3002,6 հազար մարդ: Այսինքն՝ առկա բնակչության բացարձակ թվաքանակը 10 տարիների ընթացքում նվազել է 127,2 հազարով կամ 4,2%-ով:

Հայաստանում XXդ. արձանագրվել է բնակչության ծննդաբերության աստիճանական անկում: Այսպես, 1911-1914թթ. մեր հանրապետությունում 15-54 տարեկան կանայք ամուսնական կյանքի ընթացքում ծննդաբերել են միջինը 7,2 երեխա[8], 1926-1939թթ.՝ համապատասխանաբար 7,5, 1980-ական թվականներին՝ 3,5 և XXIդ. սկզբին՝ 1,7 երեխա [7]: Այդպիսի միտումները նախ և առաջ պայմանավորված են կանանց կրթական մակարդակի բարձրացումով: Այսպես, 1979թ. բարձրագույն կրթություն ունեցող կինը միջին հաշվով ծնել է 1,59, թերի բարձրագույն կրթություն ունեցողը՝ 1,83, ընդհանուր միջնակարգ կրթություն ունեցողը՝ 1,67, ոչ լրիվ միջնակարգ կրթություն ունեցողը՝ 2,16, տարրական կրթություն ունեցողը՝ 4,13 և կրթություն չունեցողները՝ 5,12 երեխա[17]: Հասարակական կյանքի առաջին և երկրորդ անցումային շրջաններում հանրապետությունում արձանագրվել են ծնունդների բարձր, իսկ երրորդում ընդհակառակը՝ ցածր ցուցանիշներ (տե՛ս աղյուսակ 2):

Երկրորդ անցումային շրջանում՝ 1926-1930-ական թվականներին, տնտեսության վերականգնման ավարտման, արդյունաբերականացման և գյուղի կուլեկտիվացման տարիներին Հայաստանում բնակչության ծնելիության գործակիցը իր գագաթնակետին հասավ 1926թ.-ին՝ կազմելով 56,1‰: Մակայն 1930-ական թվականներին բնակչության ծնելիության մակարդակը նվազում է. դրա

հիմնական պատճառը Ս.Ստրումիլինը համարում է ժողովրդի բարեկեցության աճը[8]: Բնակչության ծնելիության մակարդակի անկում գրանցվել է նաև հետագա տարիներին:

Ի հավելումն այս ամենի՝ նշենք, որ խորհրդայնացումից հետո՝ մինչև 1930-ական թվականները, մեր հանրապետությունում դեռևս պահպանվում էր ընտանիքի ավանդական տիպը: Կուսակցության գաղափարախոսությունը կենսակերպ դարձնելուց հետո փոխվում է նաև հայ ընտանիքը: Սկսվում է ավանդական ընտանիքի, այն է՝ գերդաստանի քայքայումը: Անցում է կատարվում մեծ ընտանիքից դեպի միջինի, իսկ երրորդ անցումնային շրջանում՝ փոքրի: Նախախորհրդային Հայաստանում աղջիկների ճնշող մեծամասնությունն ամուսնանում էր 15-16 տարեկան հասակում, 1930թ.՝ համապատասխանաբար 20, 1939թ.՝ 22 [8], 1960թ.՝ 27[20], 1986թ.՝ 26, 1991թ. և 2001թ.՝ 27 տարեկանում: Այսպես, 1939-2001թթ. ընկած ժամանակահատվածում 18 տարեկանից ցածր ամուսնացած կանանց բաժինը 35,1%-ից նվազելով հասել է 0,3%-ի, իսկ 18-24 տարեկաններինը՝ ընդհակառակը՝ 43,9%-ից բարձրացել է 79,9%-ի[3]:

Աղյուսակ 2

Հայաստանի բնակչության բնական աճի գործակցի փոփոխությունն անցումային շրջաններում(1000 մարդու հաշվով)²:

Տարեթվեր	Ծնունդ	Մահ	Բնական աճ
1911-1914 թթ.	34,8	18,6	16,2
1921-1925 թթ.	33,9	18,2	18,7
1926-1930 թթ.	53,1	17,7	38,4
1931-1935 թթ.	44,6	13,7	30,9
1936-1940 թթ.	43,6	13,8	29,8
1985-1989 թթ.	22,9	5,8	17,1
1990-1994 թթ.	16,3	6,9	9,4
1995-1999 թթ.	11,5	6,3	5,1
2000-2004 թթ.	10,1	7,6	2,5

Բնակչության բնական վերարտադրության գործընթացի բաղադրիչներից ամենախոցելին մահացության գործոնն է, որն ուղղակիորեն արտահայ-

² Աղյուսակը կազմելիս օգտագործվել են. Լ. Դավթյանի, Սովետական Հայաստանի բնակչության վերարտադրությունը, Եր. 1965թ., Վ. Խոջարեկյանի, Հայաստանի բնակչության վերարտադրությունը եւ տեղաշարժերը XIX-XX դարերում XXI դարի շեմին, Եր., 2001թ., Население СССР 1987г, М. 1988г., նյութերը:

տում է տվյալ ժամանակաշրջանի հասարակական կյանքում տեղի ունեցող փոփոխությունները: Պատմականորեն Հայաստանի բնակչության մահացության գործընթացի օրինաչափությունները պայմանավորված են եղել երկրի բնակչության ու տնտեսական զարգացման մակարդակի փոփոխություններով: XX դարում հանրապետության բնակչության մահացության գործակիցն ունեցել է ինչպես աճի, այնպես էլ նվազման միտումներ: Հայաստանում 1911-1914թթ. և 1921-1925թթ. մահացության ցուցանիշը եղել է 18,2‰, 1985-1989թթ.՝ 5,8‰ (տե՛ս աղյուսակ 2) և 2001-2006թթ. կազմել է 8,0‰[15]: Մահացության ցուցանիշը հայտնի պատճառներով հատկապես բարձր է եղել Առաջին հանրապետության տարիներին:

Խորհրդային տարիներին, մասնավորապես 1970-80-ական թվականներին, բնակչության մահացության ցածր մակարդակը պայմանավորված է եղել բնակչության բարձր կենսամակարդակով, մարդիկ լիարժեք օգտվել են հանգստանալու իրավունքից, ստացել որակյալ բուժօգնություն: Հայտնի է, որ խաղաղ պայմաններում մահացածների մեջ մեծ թիվ են կազմում մինչև չորս տարեկան երեխաները և տարեցները: Բնակչության մահացության տեղաշարժերի ուսումնասիրությունից պարզվում է, որ եթե երկրորդ անցումային շրջանում՝ 1926թ., մեր հանրապետությունում մահացածների ընդհանուր թվի 61,4%-ը, 1940թ.՝ 56,4 %-ը բաժին էին ընկնում մինչև 4 տարեկաններին, ապա երրորդ անցումային փուլում պատկերը միանգամայն հակառակն է՝ 1990թ. մահացածների ամբողջ թվի 63,6%-ը և 2006թ.՝ 78,1%-ը համապատասխանաբար բաժին են ընկնում 60 տարեկանից բարձր մարդկանց[15] :


Ըստ վիճակագրական տվյալների, 1930-ական թվականներից սկսած, հանրապետությունում գրանցվել է բնական աճի նվազում (տե՛ս գծապատկեր 1-ում): Իսկ երրորդ անցումային փուլում բնական աճի սրընթաց անկում է գրանցվել: Այսպես, եթե 1990թ. մեր հանրապետությունում բնակչության բնական աճը կազմել է 16,3‰, ապա 2005թ.՝ ընդամենը 3,5‰:

Ժողովրդագրական իրավիճակը վատթարացավ նախ և առաջ ծնելիության գործակցի նվազման հետևանքով՝ 22,5‰-ից (1990թ.) մինչև 10,1‰ (2002թ.) և մահացության աճով՝ կազմելով համապատասխանաբար 6,2‰ և 8,0‰: Գծապատկեր 1-ից երևում է, որ 2000-2004թթ. բնական աճի ցուցանիշը գրեթե հավասարվել է մահացությանը: Այդպիսի միտում շարունակվելու դեպքում հնարավոր է, որ 2015թ.-ից հետո հանրապետությունում մահացածների թիվը գերազանցի ծնվածների թիվը, քանի որ այդ ժամանակահատվածում տարեց-

ների տեսակարար թվի աճ է գրանցվելու, ինչի արդյունքում ենթադրվում է նաև մահացածության աճ՝ ի հակակշիռ ծնելիության նվազման:

Գծապատկեր 1

Հայաստանի Հանրապետության բնակչության բնական աճի շարժընթացը 1914-2004թթ.



Ժողովրդագրական իրավիճակը վատթարացավ նախ և առաջ ծնելիության գործակցի նվազման հետևանքով՝ 22,5%-ից (1990թ.) մինչև 10,1% (2002թ.) և մահացության աճով՝ կազմելով համապատասխանաբար 6,2% և 8,0%: Գծապատկեր 1-ից երևում է, որ 2000-2004թթ. բնական աճի ցուցանիշը գրեթե հավասարվել է մահացությանը: Այդպիսի միտում շարունակվելու դեպքում հնարավոր է, որ 2015թ.-ից հետո հանրապետությունում մահացածների թիվը գերազանցի ծնվածների թիվը, քանի որ այդ ժամանակահատվածում տարեցների տեսակարար թվի աճ է գրանցվելու, ինչի արդյունքում ենթադրվում է նաև մահացածության աճ՝ ի հակակշիռ ծնելիության նվազման: Այդ են վկայում նաև աղյուսակ 2-ում բերված տվյալները: Իսկ դա նշանակում է, որ Հայաստանը մուտք է գործում ժողովրդագրական անցման հաջորդ՝ չորրորդ փուլ, ինչպես գիտական գրականությունում է հայտնի, «ժողովրդագրական ձմռան» կամ «ժողովրդագրական դեպոպուլացիայի» փուլը: Որպես հետևանք՝ եթե 1990-ական թվականներից հանրապետության բնակչության թիվը պակասում էր բացառապես արտագաղթող բնակչության հաշվին, ապա 2015թ. հետո դրան կարող է գումարվել բնական աճի բացասական մնացորդը:

А. Г. Бояджян

Демографические процессы населения Армении в переходные периоды

Переходные процессы общественной жизни влияют на изменение количества жителей. Для Армении характерно, что переходные этапы совпадают с переходными периодами общественной жизни. Разграничивая переходные этапы демографических процессов в нашей стране, мы опирались на переломные события истории. В XX веке в Армении можно выделить три переходных этапа. Первый этап включает с 1914-1920гг. (Первая мировая война, установления советской власти). Второй этап-1921-1937гг (годы НЭП, переход от капитализма к социализму, индустриализация и коллективизация). Третий этап-1988-2003гг. (Арцахское движение, установление независимости, процессы приватизации, переход от социализма к свободным рыночным отношениям).

A.G. Boyajyan

**Demographic Activities of the Armenian Population
in Transitional Periods**

The transitional periods of the social life have their influence on the shift of population in number. It is evident that the demographic transitional phases in our republic have chronologically coincided with the transitional phases of the social life. While bordering the transitional frames we have taken into account the historical events which definitely have affected the demographic dynamics of our population. In that sense, in the XX century Armenia we can distinguish three transitional phases. The first transitional phase includes 1914-1920 (from World War I till the affirmation of the Soviet regime), the second one in 1921-1937 (years of NEP, industrialization and collectivization, transition from capitalism into socialism) and the third one is in 1988-2003 (war in Artsakh, independence, process of privatization, transition from socialism into free marketing relations)

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Ադոնց Մ., Հայաստանի ժողովրդական տնտեսությունը և հայ տնտեսագիտական միտքը XX սկզբին, Եր., 1968թ., էջ 491:
2. Ավագյան Ա., Հայկական ՍՍՀ բնակչությունը, Եր., 1975թ., էջ 300:
3. Ավետիսյան Խ., Սովետական Հայաստանի բնակչության և բնակավայրերի աշխարհագրություն, Եր., 1987թ., էջ 196:
4. Ավետիսյան Խ., Սպիտակի երկրաշարժի գոտու բնակչության միգրացիայի վերլուծությունը, Լրաբեր հասարակական գիտությունների, թիվ 1(601), Եր., 2000թ., էջ 242-254:
5. Բոյաջյան Ա., Ալեքսանդրապոլ-Լենինական գավառի ժողովրդագրական դրությունը 1914-1930-ական թվականներին, ՀԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 12, էջ 124-133:

6. Բոյաջյան Ա., Հայրենադարձությունը Լենինականում 1946-47թթ., Շիրակի պատմամշակութային ժառանգությունը, հանրապետական 7-րդ գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի 2007թ., էջ 165-170:
7. Գաբրիելյան Ն., Հայաստանի Հանրապետության բնակչության ծնելիության առանձնահատկությունները, Անցման սոցիալական և ժողովրդագրական գինը, միջազգային գիտաժողովի զեկուցումների թեզիսներ, Եր., 2008թ., էջ 111-115:
8. Դավթյան Լ., Սովետական Հայաստանի բնակչության վերարտադրությունը, Եր., 1965թ., էջ 218:
9. Եզանյան Գ., Միգրացիոն մարտահրավերները և դրանց կարգավորմանն ուղղված քայլերը Հայաստանում, Հայաստանում անցման սոցիալական և ժողովրդագրական գինը, միջազգային գիտաժողովի զեկուցումների թեզիսներ, Եր., 2008թ., էջ 55-58:
10. Խոջաբեկյան Վ., Հայաստանի բնակչության վերարտադրությունը եւ տեղաշարժերը XIX-XX դարերում XXI դարի շեմին, Եր., 2001թ., էջ 479:
11. Կորկոտյան Զ., Սովետական Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում, Եր., 1932թ., էջ 178:
12. Հայաստանի Հանրապետության 2001թ. մարդահամարի արդյունքները, Եր., 2003թ., էջ 541:
13. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., 2011թ., էջ 624:
14. Ֆահրադյան Մ., Բնակչության մահացության գործընթացի փոփոխության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Հայաստանում անցման սոցիալական և ժողովրդագրական գինը, միջազգային գիտաժողովի զեկուցումների թեզիսներ, Եր., 2008թ., էջ 83-88
15. Геноцид армян в Османской империи, Сборник, документов и материалов, под. Ред. М. Нерсисян, Ер. 1982г., с. 534
16. Итоги всесоюзной переписи населения 1979г. по Армянской ССР, II том, Ер., 1981, с. 409.
17. Население СССР 1987г, М. 1988г., с. 43.
18. Туманян О., Экономическое развитие Армении, Ер., 1954г., с 355.
19. В. Ходжабекян, Б. Асатрян, Демографические аспекты урбанизации в Армянской ССР, Ер., 1990г., с.187.
20. www.armstat.
21. Novosti, Liasion Agessi, Washington, 1995.

Տեղեկություններ հեղինակի մասին

Բոյաջյան Արտաշես Գևորգի – պատմ. գիտ. թեկնածու, Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ, աշխարհագրության ամբիոնի ասիստենտ, E-mail: a.boyajyan@mail.ru

Տրվել է խմբագրություն 19.06.2012